1885-1908 ԹԹ. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԱՐՄԵՆ ԿԻՏՈՒՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ՍԱՐԳՍՅԱՆ Ս. Թ.

Հայ ազգային-ազատագրական պայքարն ըստ էության վճռական փուլ թևակոխեց XIX դարի 80-ական թվականների կեսերից և, փաստորեն, ավարտվեց 1908 թ. երիտթուրքական սահմանադրության ընդունմամբ: Առ այսօր մեր պատմագիտության մեջ բաց են մնացել այդ շրջանին վերաբերող լուսաբանման կարոտ շատ հարցեր. այս-պես՝ ազատագրական պայքարում առկա տարբեր ուղղությունները, ազատամարտի արդյունավետության հարցը, արևմտահայության առաջին զանգվածային ջարդերի (1890-ական թթ.) պատճառները: Արդյոք կապ կա՞ր հայ ազգային կուսակցությունների՝ առավել հաճախ մեծ տերությունների միջամտության հույսով ազատագրական պայքարի կազմակերպման և այդ ջարդերի միջև: Արդյո՞ք մեծ տերություններին ապավինելով և մասնակի դրվագների կազմակերպումով, թե՞ մեկ նպատակի շուրջն ուժերի համախմբումով էր հնարավոր հասնել ակնկալած հաղթանակին: Սրանք և բազմաթիվ այլ հարցեր դեռևս չեն գտել իրենց վերջնական պատասխանները: Իսկ այդ պատասխանները, թերևս, կարելի է գտնել այդ ժամանակահատվածի վերաբերյալ ստեղծված կուսակցական ստվար գրականության ուսումնասիրության և այն պատմագիտական հայեցակարգերի ընդունման ճանապարհով, որոնց ընդհանրությունը տեսնում ենք երեք կուսակցությունների գործիչների և պատմաբանների գրական ժառանգություններում:

Ի վերջո, ցավալի, բայց, անժխտելի փաստ է, որ հայ ազգային-ազատագրական պայքարը, որը ձևավորվեց արևմտահայ խնդրի շուրջ, պարտվեց: Այս պարտության պատճառների համակողմանի ընկալումն անհնար է ինչպես առանց վերլուծելու այդ պայքարի վերաբերյալ ստեղծված բազմաթիվ ու բազմաբնույթ աշխատությունները, այնպես էլ կուսակցական պատմագիտական միտքը:

Հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության 1885-1908 թթ. շրջանի վերաբերյալ վստահ կարելի է պնդել, որ Հնչակյան կուսակցությունը ևս արմենականների նման չունի կուսակցական պատմագրություն: Ուստի, ինչպես Արմենական կուսակցության պարագայում, այս դեպքում էլ խոսք կարող է լինել այդ ժամանակա-շրջանի հայ ազատագրական պայքարի վերաբերյալ հնչակյան կուսակցականների՝ հիմնականում պատմագիտական մտքի մասին: Այս առումով լիարժեք և ամբողջական պատմագիտական ուսումնա-

սիրություն դժվար է համարել նույնիսկ Ա. Կիտուրի աշխատությունը[1]:

Հեղինակի «Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան, 1887-1962» երկհատոր ծավալուն երկն ընդգրկում է Արևմտյան Հայաստանի՝ Թուրքիայի տիրապետության տակ ընկնելու շրջանից (որը ներկայացված է շատ սեղմ) մինչև 1920 թ. Կիլիկիայի դեպքերը: Բացի այդ՝ գրքում առանձին բաժնով տրված են 1924, 1934 և1938 թվականներին տեղի ունեցած կուսակցության 8-րդ, 9-րդ և 10-րդ ընդհանուր պատգամավորական ժողովների որոշումները: Հեղինակը «Թուրքական տիրապետության լուծ» փոքրիկ գլխում Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող ժողովուրդների դրությունը ներկայացնելուց հետո անդրադառնում է 1860-64 թվականներին արևմտահայության վիճակին և Զեյթունի 1862 թ. ապստամբությանը:

Ընդհանուր առմամբ, Կիտուրն այն կարծիքն է հայտնում, որ կայսրության հպատակ ժողովուրդները ծանր կացության մեջ էին, որովհետև ենթարկվում էին տնտեսական, քաղաքական և կրոնական ճնշումների: Հեղինակը միաժամանակ ներկայացնում է տիպիկ սոցիալ-դեմոկրատական տեսակետ. «կեղեքումներուն ենթական էին նաեւ թուրք աշխատավորները»[2]:

Զեյթունի 1862 թ. ապստամբությանը փոքրիկ անդրադարձ կատարելուց հետո Ա. Կիտուրը համոզված գրում է, որ այդ ապստամբությամբ նույնիսկ Կ. Պոլսի հայերն են ներշնչվում, ինչի շնորհիվ այդ շրջանում այնտեղ գտնվող Մ. Նալբանդյանի նախաձեռնությամբ հիմնվում է «գաղտնի կազմակերպութիւն մը Արեւմտահայերու մէջ յեղափոխական աշխատանք տանելու համար»[3]: Կարծում ենք, որ սա եթե ոչ սխալ, ապա վիճելի տեսակետ է, ինչպես վիճելի է մի խումբ պատմաբանների հայտնած (Լեո, Վ. Պարսամյան և այլն) այն կարծիքը, թե Մ. Նալբանդյանն է Զեյթունի ապստամբության, ավելի ճիշտ՝ ինքնապաշտպանության գաղտնի կազմակերպիչը[4]: Այնուհետև Ա. Կիտուրը համառոտ ներկայացնում է Հայկական հարցի ծագման պատմությունը, անդրադառնում է Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ և Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածներին: Նա այն կարծիքն է հայտնում, որ «Արեւմտեան Հայաստանի հարցը՝ սկսած Պերլինի ժողովէն, մտավ միջազգային դիւանագիտութեանց մէջ՝ «Հայկական Հարց» անունով»[5]:

Կարելի է վիճարկել հեղինակի այս դրույթն այն առումով, որ Բեռլինի դաշնագրով եթե Հայկական հարցը մտավ միջազգային դի-

---

[1] *Տե՛ս* **Արսէն Կիտուր**, *Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան, 1887-1962, ուսուցչապետ, հ. Ա, Պէյրութ, 1962:*

[2] *Նույն տեղում, էջ 13:*

[3] *Նույն տեղում:*

[4] **Լեո,** *Թյուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Փարիզ, 1934,* **Պարսամյան Վ.,** *Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Ե., 1958:*

[5] *Նույն տեղում, էջ 21:*

վանագիտության ասպարեզ, դեռևս չի նշանակում, թե այն ծագել է հենց այդ վեհաժողովում[6]:

Ա. Կիտուրն ամենևին չի սխալվում, երբ 1870-1880-ական թթ. արևմտահայ ազատագրական շարժումները պայմանավորում է արևմտահայության ծանր վիճակի է՛լ ավելի վատթարացումով[7]: Իսկ 1870-1880-ական թթ. հայ ազատագրական խմբակների առաջացումը հեղինակն իրավացիորեն պայմանավորում է արևմտահայության ազատագրությունը կազմակերպելու անհրաժեշտությամբ: Ա. Կիտուրը գնահատում է Ռ. Պատկանյանին, Ռաֆֆուն և Գր. Արծրունուն՝ որպես ազատագրական շարժման գաղափարախոսների: Հեղինակը բավական հետաքրքիր կարծիք է հայտնում 1870-1880-ական թթ. եվրոպական պետությունների՝ Հայկական հարցի նկատմամբ ունեցած վերաբերմունքի կապակցությամբ. «Անոնք կ՚աշխատէին անխախտ պահել սուլթանական բռնապետութիւնը, իսկ այդ կը նշանակէր անխախտ պահել այդ բռնապետութեան լուծը՝ նուաճուած ժողովուրդներու վրայ»[8]:

Կարծում ենք՝ Ա. Կիտուրն այստեղ այնքան էլ ճիշտ չէ: Ընդհակառակը, մեծ տերությունները, ելնելով իրենց քաղաքական շահերից, ավելի հաճախ խրախուսել են թուրքահպատակ ժողովուրդների ազատագրական շարժումները՝ Թուրքիան մասնատելու և միմյանց միջև բաժանելու համար: Ավելին՝ նրանցից որևէ մեկը եթե երբևէ ձգտել է Օսմանյան կայսրության պահպանմանը, ապա միայն հակառակորդ տերության քաղաքական շահերին դեմ գնալու համար (հատկապես Անգլիային, Ֆրանսիային և Ռուսաստանին): Իրականությանը չի համապատասխանում նաև հեղինակի այն ըն այս անգամ էլ դրժում են իրեն ց խոստուուածը իր սլաքները ուղղեց ոչ միայն սուլթանիզմին, այլ նաեւ՝ ցարիզմին դէմ»: Մինչև 1903 թ. հայոց կռվի ճակատը Արևմտյան Հայաստանն էր, և վերոհիշյալ շրջանի հատուկենտ ցույցերն ամենևին չեն նշանակում, թե հայությունը պայքար սկսեց նաև ցարիզմի դեմ: Մեր խորին համոզմամբ՝ հայ ազատամարտի երկրորդ ճակատը բացվեց 1903 թ. և վավերացվեց 1905 թ. «Կովկասյան նախագծով»[9]:

Ա. Կիտուրը 1970-80-ական թթ. հայ կյանքում գոյություն ունեցած հասարակական-քաղաքական հոսանքները բաժանում է խորհրդահայ պատմագիտության որդեգրած սկզբունքների (դրանք այսօր հնացած են և քննություն չեն բռնում) կրկնությամբ: Դրանք են՝ կղերապահպանողականը, որը դեմ էր «որեւէ յառաջադիմական գաղափարի և շարժումի» և պայքարում էր հեղափոխական մտավորականների դեմ, լիբերալ-բուրժուականը, որը դարձյալ դեմ էր հեղափոխությանը, բայց բարեփոխումների կողմնակից էր: Ա. Կիտուրը չի առանձնացնում միայն հեղափոխական-դեմոկրատական հո-

---

[6] **Խուրշուդյան Լ.,** *Հայկական հարցը, Ե., 1995, էջ 8:*

[7] *Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան, էջ 21-22:*

[8] *Նույն տեղում, էջ 24 (այս և հետագա բոլոր ընդգծումները մերն են):*

[9] *Մանրամասն տե՛ս* **Ներսիսեան Ա.,** *Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն (1898-1908), հ. Բ, Պէյրութ, 2008, էջ 213-231:*

սանքը, այլ դրա փոխարեն հիշատակում է նարոդնիկներին, որոնց պայքարի գլխավոր զենքն ահաբեկչությունն էր: Դրանց թվում նա դասում է նշանավոր հասարակական-քաղաքական գործիչներ Կ. Մամիկոնյանին, Հովհ. Մանուչարյանին և Ս. Տեր-Գրիգորյանին, որոնք 1880-ին ձուլվեցին «հայ լիբերալ-մշակականներուն հետ»[10]: Այս ամենից հետո հեղինակն անդրադառնում է մեր ուսումնասիրության շրջանին վերաբերող պատմական իրադարձություններին: Այդ բաժնում («Յեղափոխական շարժումը Վանի մէջ») ներկայացվում է արմենականների գործունեությունը Վանում: Սակայն մինչ արմենականներին անդրադառնալը նա համառոտ շարադրում է 1870-80-ական թթ. Վանում ստեղծված ազատագրական խմբակների պատմությունը («Միություն ի Փրկություն», «Սև խաչ[11]» և այլն), ինչպես նաև գնահատում է Մ. Խրիմյանի և Մ. Փորթուգալյանի լուրջ աշխատանքը Վան-Վասպուրականում ազատագրական գաղափարախոսության ծավալման գործում:

Կիտուրն իրավացիորեն Արմենական կուսակցության հիմնադիր է համարում «Երկու Մկրտիչներու շունչին տակ հասակ առած» Մ. Թերլեմեզյան-Ավետիսյանին: Նաև ճիշտ է հեղինակը, որ այդ կուսակցության ստեղծման թվական է համարում 1885-ը, սակայն ոչ իրավացի, երբ գրում է, թե նույնիսկ հայտնի չէին, թե ովքեր և քանի հոգի էին նրանք[12]: Նրանք ինն էին, և բոլորի անուններն էլ հայտնի են:

Ապա Ա. Կիտուրը հանգամանորեն անդրադառնում է Հնչակյան կուսակցության ստեղծման ու գործունեության պատմությանը: Նա այս կուսակցության հիմնադիր է համարում Ժնևի համալսարանի ուսանողներ Ա. Նազարբեկյանին, Մ. Վարդանյանին, Ռ. Խանազատին և Գ. Կաֆյանին: Վերջիններս եվրոպական և ռուսական հեղափոխական գաղափարախոսությունների ազդեցությունը կրած գործիչներ էին: Այս խումբը աստիճանաբար ձեռք է բերում համախոհներ, որոշում նվիրվել Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդրին, դրա լուծման համար հայ հեղափոխականների ընդհանուր համագումար գումարել և այդ գործը նախաձեռնելու համար դիմում է Մ. Փորթուգալյանին: Սակայն վերջինս մերժում է նրանց՝ պատճառաբանելով, որ ինքը «նման միություն մը կազմելու վրայ է»[13]: Եվ ահա Ժնևի խումբը, որի անդամների թվաքանակն արդեն հասնում էր ինը հոգու, որոշում է.

---

[10] *Նույն տեղում, էջ 24-25:*

[11] **Կոստանդյան Է.,** *Մկրտիչ Խրիմյան, հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2000, էջ 282-301:*

[12] **Կոստանդյան Է.,** *Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Ե., 2005, էջ 112:* **Կարապետյան Ա.,** *Արմենական կուսակցության կազմավորումն ու գործունեությունը, Ե., 2003, էջ 5:* **Սարգսյան Ս.,** *Հայ սահմանադրական ռամկավար կուսակցություն, 1908-1921 թթ., Ե., 2009, էջ 31:* **Ղազարյան Վ.,** *Արմենական կուսակցություն, Պեյրութ, 1985, էջ 8 և այլն:*

[13] *Նույն տեղում, էջ 29:*

ա) կազմել ապագա ընկերության ծրագիրը, որի նախապատրաստությունը հանձնարարվում է Ա. Նազարբեկյանին, Մ. Վարդանյանին և Գ. Ղարաջանյանին.

բ) հրատարակել թերթ և երիտասարդությանը համախմբել նրա շուրջ: Այդ թերթը անվանվում է «Հնչակ[14]» և լույս է տեսնում 1887 թ., իսկ նրա շուրջ համախմբվածներն էլ կազմում են Հնչակյան կուսակցությունը:

Կիտուրը միանգամայն ճիշտ է, երբ գրում է, թե այս խմբի անդամները «ջերմապէս խանդավառուած էին ռուսական յեղափոխութեան գաղափարաբանութեամբ և անոր յախուռն գործունեութեամբ: Ժընեւի մէջ անոնք մշտապէս յարաբերութեան մէջ էին և մօտէն շփում ունէին հոն գտնուող նարօտնիկներու և Պլեխանօվականներու հետ: Հայ երիտասարդները կը խանդավառուէին մէկ կողմէ նարօտնիկներու ահաբեկչական յախուռն գործունէութեամբ, և կ'երազէին զայն փոխադրել Հայաստան և հոն կիրառել միեւնոյն մէթօտները թուրք բռնակալութեան դէմ, միւս կողմէ ալ՝ Մարքսիզմը իր նոր վարդապետութեամբ, իր գիտական հիմունքներով անոնց միտքին ու տրամաբանութեան կը խօրեր»[15]:

Այս ամենը, հարկավ, ճիշտ է: Բայց ինչպես կարելի էր գործունեության մարտավարություն ընտրել մի երկրի համար, որում գրեթե չէին եղել, և որի պայմաններին ամենևին ծանոթ չէին: Դեռ ավելին, սոցիալիզմ երազել նույն այդ երկրի համար, որը դեռևս միջնադարյան ֆեոդալական հարաբերությունների զարգացման ընթացքի մեջ էր: Այս առումով հեղինակը հարկ եղած վերլուծությունները չի կատարում: Մի բան ակնհայտ է, որ հնչակյան գործիչներն ընկել էին քաղաքական ռոմանտիզմի գիրկը, որից մինչև վերջ էլ չկարողացան ձերբազատվել: Ապա Ա. Կիտուրը ներկայացնում է կուսակցության ծրագիրը, որն ուներ «հեռավոր» և «մոտավոր» նպատակներ. մոտավոր նպատակը Արևմտյան Հայաստանի քաղաքական ազատագրությունն էր, իսկ հեռավորը՝ սոցիալիստական կարգերի հաստատումը: Սակայն ուզում ենք հատկապես ընդգծել հեղինակի հետևյալ դարձվածքը. «Խմբակի բոլոր անդամները կը փայփայէին Հայաստան մեկնելու գեղեցիկ յոյսը հոն, տեղւոյն վրա ուսումնասիրելու հայութէան տառապալից կեանքը և յեղափոխութեան ապագայ գործունէութեան պայմաններն ու կարելիութիւնները»[16]:

Բնականաբար, դեռևս չտեսած երկրի վերաբերյալ ազատագրության ծրագրերի մշակմանը պետք է նախորդեր այդ երկիր մեկնելն ու այն մանրամասն ուսումնասիրելը, և ոչ թե այն տեսնելուց առաջ նպատակներ և դրանց հասնելու միջոցներ նախատեսվեին կամ ծրագրվեին: Տեղական պայմաններին անծանոթ լինելով՝ ռազմավարություն ու մարտավարություն ընտրելն ամենևին չէր բխում արևմտահայության շահերից, և սա խիստ բացասաբար անդրադարձավ հրն-

---

[14] *Ռուս հեղափոխական դեմոկրատ Գերցենի «Կոլոկոլ» պարբերականի անվան հայերեն թարգմանությունը:*

[15] *Նույն տեղում, էջ 31:*

[16] *Նույն տեղում, էջ 38:*

չակյանների գործունեության արդյունավետության և արևմտահայերի առանց այն էլ վատթար կացության վրա: Ա. Կիտուրն այնուհետև անդրադառնում է հնչակյանների գործունեությանը, ընդ որում՝ ոչ թե վերլուծելով, այլ սոսկ նկարագրելով դրանք: Այսպես, նա նկարագրում է Ռ. Խանազատի Կ. Պոլիս մեկնելը, նրա հանդիպումները Խրիմյան Հայրիկի, Ա. Արփիարյանի և այլոց հետ: Այնուհետև ներկայացնում է նրա անցումը Թիֆլիս (1889 թ.), որտեղ այդ շրջանում ձևավորման գործընթացի մեջ էր Հայ հեղափոխական դաշնակցությունը, նրա հանդիպումները տեղի գործիչների հետ, որոնք ձգտում էին հնչակյաններին նույնպես միավորել Հայ հեղափոխական դաշնակցությանը: Ըստ հեղինակի՝ միավորմանը խոչընդոտում է այն, որ դաշնակցության հիմնադիրները չէին ցանկանում, որ Ռ. Խանազատի առաջարկած սոցիալիզմի գաղափարախոսությունը «սուր կերպով դրուէր հայկական շրջաններուն մէջ»[17]:

Մենք այն կարծիքին ենք, որ առհասարակ սոցիալիզմի վարդապետությունը երկու կուսակցությունների համար էլ պետք է մղվեր երկրորդական պլան: Որովհետև այն բոլոր ժողովուրդները, ովքեր օտարի տիրապետությունից ազատագրվելու ձգտում ունեն, նախ այդ խնդիրը պիտի լուծեն, իսկ կառավարման վարչաձևը որոշեն ազատությունը նվաճելուց հետո միայն: Արևմտահայության ազատագրության շահը պահանջում էր հանուն ազատագրական պայքարի բոլոր ուժերի՝ առանց դասակարգային տարբերակման, համախմբում և միավորում մեկ դրոշի ներքո, որը, դժբախտաբար, տեղի չունեցավ: Միայն առերևույթ և շատ կարճ ժամանակով հնչակյանները ներառվեցին Հայ հեղափոխական դաշնակցության մեջ և շատ արագ էլ բաժանվեցին: Ըստ Ա. Կիտուրի՝ այդ բաժանումը տեղի ունեցավ դաշնակցականների մեղքով, քանի որ վերջիններս ձգտում էին անբաժան ղեկավարության: Բացի այդ՝ հեղինակի կարծիքով, ըստ Դաշնակցության՝ «սոցիալիզմ» բառը կխրտնեցներ եվրոպական տերություններին, որոնց օգնությամբ էր ակնկալվում Արևմտյան Հայաստանի ազատագրությունը: Բայց չէ՞ որ նույն միջամտության հույսով են գործել և՛ Դաշնակցությունը, և՛ մեր բոլոր քաղաքական մյուս ուժերը: Այս առումով բավական իրատեսական տեսակետ է հայտնում Հնչակյան կուսակցության պաշտոնաթերթը. «Ինչպիսիք էլ լինեն հայոց յեղափոխական ձգտումները, լինեն սոցիալիստական, լինեն նացիոնալիստական, լինեն դրանից էլ նեղ ու սահմանափակ, եթե Եւրոպայի շահերը թելադրեն նրան՝ համակրել կամ օգնել հայերին, նա կը համակրէ ու կ'օգնէ: Նա հայկական շարժման վերաբերութեամբ այնպիսի ընթացք եւ դիրք կ'ունենայ, որպիսիք պահանջում են իր շահերը, կատարելապէս անտէս առնելով հայոց յեղափոխական ձգտումների առաւել կամ նուազ ծայրայեղ լինելը»[18]: Սրանով հանդերձ՝ հնչակյանները կատարում էին այնպիսի քայլեր, որոնց տրամաբանությունը ամենևին կապ չուներ վերոհիշյալ ըմբռնման հետ: Իսկ սա չի ընդունում Ա. Կիտուրը:

[17] *Նույն տեղում, էջ 43:*
[18] *Հնչակ, 20.VI.1891:*

Դարձյալ բոլշևիկյան գաղափարական ազդեցությամբ պայմանավորված՝ հեղինակը գրում է տողեր, որոնք հնաբույր են, սակայն «բխում են աշխատավորների հեղափոխական պայքարի դրույթներից»: Այսպես, նա գրում է. «Թուրք ժողովրդի հանդէպ Հնչակեան կուսակցութիւնը երբեք բացարձակ թշնամանք ու վրէժխնդրութիւն չէ ունեցած և չէ ուզած որ իր մարտական շարքերուն մէջ ազգայնամոլ «վրէժխնդիր ֆիտայի»ներ գտնուին, այլ ունեցած է ճշմարիտ հայրենասէրներ»[19]: Բայց արի ու տես, որ իրենց կուսակցությանը հակառակ, Ա. Կիտուրի կարծիքով, Դաշնակցությունն «ազգայնամոլ», վրեժխնդիր կազմակերպություն էր: Բայց մի բան է ազգայնական, մեկ ուրիշ՝ ազգայնամոլ լինելը: Դաշնակցությունը նույնպես ընդդեմ թուրքական բռնապետության բոլոր օսմանյան ճնշված ազգերի միասնական պայքարի ջատագով և կողմնակից էր: Այնպես որ, այս առումով հնչակյանների և նրանց միջև անջրպետ գտնելը, մեր կարծիքով, արհեստական է, մտացածին և ամբողջովին կուսակցական աչառու մոտեցումների արդյունք:

Ոչ պակաս հետաքրքիր են ՀՅԴ-ի հետ չմիանալու Հնչակյան կուսակցության՝ Ա. Կիտուրի ներկայացրած պատճառաբանությունները: Դրանք են «ա. Ան (ՀՅԴ-ն – Ս. Ս.) չունէր ճշտուած ծրագիր, բ. Անոր մէջ տեղ գտած էին ամէն կարգի, ամէն հասկացողութեան և ամէն գաղափարի անհատներ, առանց ընդհանուր ուղեգծի: գ. Նոր-բակազմ կուսակցութիւնը մերժած էր որդեգրել սօցիալիստական սկզբունքները, թէկուզ որպէս «հեռաւոր նպատակ»[20]: Այստեղ հետաքրքիր իրավիճակ է ստացվում, երբ մի քաղաքական ուժը քննադատում է մյուսին գրեթե նույն բաների համար: Այսպես՝ ա) եթե խոսքը վերաբերում է ճշտված ծրագրին կամ բյուրեղացած գաղափարախոսությանը, ապա այդպիսին հնչակյան կուսակցությունը նույնպես չուներ. բ) թեպետ առկա ծրագրային դրույթներին՝ Հընչակյան կուսակցությունը նույնպես չուներ գործողության ընդհանուր և միասնական ուղեգիծ. նա մեկ խոշոր տերությունների միջամտության հույսով տարանջատ, մասնակի, երբեմն էլ ցուցադրական ելույթներ էր ձեռնարկում, մեկ էլ քարոզում ու նախապատրաստվում էր ընդհանուր ապստամբության. գ) Դաշնակցությունը թերևս ճիշտ էր, որ սոցիալիզմի խնդիրը չէր մղում առաջին պլան. նախ՝ դաշնակցության առաջնորդները լավ հասկանում էին, որ միջնադարյան ֆեոդալական պայմաններում հեծող արևմտահայ իրականությունը հասու չէր ընկալելու սոցիալիզմի դրույթները: Հետո էլ, ինչպես արդեն ասվեց, եվրոպական խոշոր տերությունները, Փարիզի կոմունայից սարսափած, խրտնում ու հրաժարվում էին օգնել ոչ միայն սոցիալիզմ դավանողներին, այլև նույնիսկ այդ բառն արտաբերողներին: Ավելին՝ չէ՞ որ հենց այդ խնդրի որդեգրման նպատակահարմարությունից ելնելով էր, որ Հնչակյան կուսակցությունը 1896-ին պառակտվեց:

---

[19] *Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան, էջ 47:*

[20] *Նույն տեղում, էջ 47:*

Եզրակացությունը մեկն է՝ երկու կուսակցություններն էլ իրար քննադատում էին միևնույն սխալների համար:

Ա. Կիտուրն իր աշխատության մեջ շատ հակասական է ներկայացնում հնչակյանների կազմակերպած ցույցերի հետևանքները: Դա նախ վերաբերում է Կարնո 1890 թ. հունիսի 18-ի, ապա նույն թվականի հուլիսի 15-ի ցույցերին: Մի կողմից նա այն ճիշտ կարծիքն է հայտնում, որ դրանք կազմակերպվել են Հայկական հարցի լուծման համար մեծ տերությունների միջամտությունն ակնկալելու հույսով (որն իրոք այդպես էր), գտնելով, որ այդ առումով հնչակյանները չեն հասնում իրենց նպատակին, մյուս կողմից էլ չի հակադրվում Խանազատի և Կաֆյանի այն տեսակետին, որ Էրզրումի ցույցից հետո նոր ցույցի կազմակերպումը «կը խանդավառէ զանգուածը ցանկալի օրուան համար»[21]: Այդ նոր ցույցը Գում Գափուի հայտնի ելույթն էր, որը, ըստ էության, որևէ իրական արդյունքի չհանգեցրեց: Դա ավելի շուտ զգացմունքային մի արարք էր, որը չէր կարող հանգեցնել խոշոր տերությունների միջամտությանը: Ա. Կիտուրը ակամա հաստատում է դա. «Հնչակեան այս զգայացունց և անօրինակ ցոյցին լուրը արագութեամբ կը տարածուի քաղա- քին մէջ: Տոնական ընդունելութեան ատեն (Գուրպան Պայրամի օրն էր – Ս.Ս.) պետական բոլոր շրջանակներու խոսակցութեան նիւթը այդ կ'ըլլայ»[22]: Ցույցն այն հետևանքներն ունեցավ, որ հայերից շատերը ձերբակալվեցին, դատվեցին, աքսորվեցին, սպանվեցին, և մահափորձ կատարվեց Աշըգյան պատրիարքի նկատմամբ:

Սակայն, կարծես չնկատելով ցույցին հաջորդած աղետալի իրավիճակն ու ոգևորված նկարագրելով այդ ելույթի ահագնացող ազդեցությունն ու բացառապես «դրական» հետևանքները, Ա. Կիտուրը գրում է. «Գում Գաբուի ցոյցին մասնակցող պոլսեցիները և գաւառացիները իրենց մորթին վրա զգացին սուլթանիզմի զուլումը: Պոլսէն աքսորուելով՝ գաւառները տարածուող «կասկածելիները» լաւագոյն տարածիչները դարձան Հնչակեան յեղափոխական և սօցիալիստական սերմերուն: Որքա՜ն հալածում, այնքա՜ն տարածում: Գում Գափուի ցոյցին սուլթանիզմը զգաց հայուն տառապանքէն ծնած զայրոյթը և հայ յեղափոխական-մարտական ոյժին տինամիզմը, այսինքն Հնչակեան բռունցքին ոյժը և կազմակերպութեան հզօրութիւնը: Սուլթանի մայրաքաղաքին մէջ բռնութեան դէմ ծառացող Հնչակեանութիւնը ավելի գործ տեսաւ, քան թէ Խրիմեաններու, Մինաս Չերազներու բազմահարիւր ճառերը և բազմահատոր աղերսագրերը: Սուլթանին կը մնար անքուն գիշերներ անցկացնել այնուհետեւ…»[23]:

Ա. Կիտուրի հետ դժվար է համաձայնվել հետևյալ պատճառներով. նախ՝ գավառում ապրող բնակչությունը սուլթանիզմի «զուլումը» մինչև այդ ցույցն էլ անընդհատ զգացել էր, իսկ պոլսեցիները դրանք չէին զգա, եթե չլիներ այն: Երկրորդ. Արևմտյան Հայաստա-

[21] *Նույն տեղում, էջ 53:*
[22] *Նույն տեղում, էջ 59:*
[23] *Նույն տեղում, էջ 62:*

նի միայն հատուկենտ գավառներում հնչակյանները գաղափարական, քարոզչական աշխատանքներ ծավալեցին, իսկ այդ վայրերում (Սասուն, Զեյթուն և այլն) ընդունելի եղան միայն այդ պայքարի ազատագրության գաղափարները և ոչ երբեք սոցիալիզմի: Թշվառ ու միջնադարյան խավարում խարխափող գյուղացին ինչ կարող էր հասկանալ սոցիալիզմից: Երրորդ. արդյունքի առումով Գում Գափուի ցույցը ճիշտ չի համեմատել Խրիմյանի և Չերազի ճառերի հետ, որովհետև վերջիններս պայքարի գաղափարախոսներ էին և գնահատելի են բացառապես այդ տեսանկյունից: Իսկ Գում Գափուի ցույցը եվրոպական տերությունների միջամտության հույսով ընդվզում էր, որոշակի ելույթ, որը, ցավոք, որևէ արդյունք չտվեց ու այդ պայմաններում չէր էլ կարող տալ: Իսկ Խրիմյանների գաղափարախոսությունը, որի շնորհիվ էին ծնվել նաև Հնչակյան և մյուս կուսակցությունները, տվել է իր արդյունքները:

Ա. Կիտուրն իր աշխատության մի բաժինն էլ նվիրել է Նազարբեկյանի նամականուն, որտեղ փորձում է տպավորություն ստեղծել հեղափոխական պայքարի նրա ըմբռնումների և կազմակերպչական ջանքերի մասին: Այդ նամակներում միշտ հնչող զինվելու անհրաժեշտության գաղափարը, ընդհանուր նախապատրաստության հրահանգներն ու հորդորները, սոցիալիզմի գաղափարախոսության ճըշմարտացիության հիմնավորումը, սակայն, գործնական առումով գրեթե ոչնչի չեն հանգեցնում, եթե չհաշվենք Զեյթունի 1895-1896 թթ. ապստամբությունը: Դրանք բխում են հնչակյան ծրագրային դրույթներից և այդ դրույթների յուրահատուկ մեկնություններ են, որոնք, սակայն, այդպես էլ չիրականացան:

Թերևս աշխատության «Ներքին գաւառներու կազմակերպությիւնը» վերնագրված բաժինը ամենաուշագրավներից է, որտեղ հեղինակը ծանոթացնում է հնչակյան առանձին գործիչների՝ Կովկասում և Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններում ծավալած կազմակերպչական աշխատանքներին: Նկարագրվում է նշանավոր հնչակ-յաններ Ռաֆայել Մովսիսյանի, Սիմոն Նադիրյանի, Գաբրիել Կաֆյանի, Լևոնի (Բարսեղ Զաքարյան), Ժիրայրի, Մինաս Օղլուի, Չելլոների, Գալուստ Ալեքսանյանի և այլոց գործունեությունը:

Հեղինակը, փաստորեն, ներկայացնում է և՛ գաղափարական գործիչներին, և՛ հայդուկներին: Սակայն նրա մանրամասն անդրադարձներին գրեթե չեն հետևում վերլուծություններ ու տեսական ընդհանրացումներ: Մասնավորապես՝ հայդուկների գործունեության հերոսականությունը բոլորի համար կասկածից վեր է: Բայց թե դա համայն արևմտահայության շահերի տեսանկյունից ինչի հանգեցրեց, Ա. Կիտուրն այդ մասին լռում է:

Ա. Կիտուրի աշխատության այս բաժնից ընթերցողը տեղեկություններ է քաղում հնչակյան առանձին գործիչների սխրալի արարքների մասին, որոնք, ցավոք, ի վերջո ավարտվում են պարտությամբ և անձնուրաց հայդուկների եղերական վախճանով: Փաստորեն, տպավորությունն այնպիսին է, որ՝ ա) հնչակյան հայդուկները տակավին կուսակցական դառնալուց առաջ էլ ինքնաբուխ ինքնապաշտպանության կազմակերպիչներ էին: Բայց դրանից հետո էլ

նրանք շարունակում են գործել տարանջատ, ոչ միասնական, ինչպես նախկինում. բ) կազմակերպչական աշխատանքներ ձեռնարկած հնչակյան գործիչները հիշյալ հայդուկներին (Չելլոներ, Դանիել Չավուշ, Մինաս Օղլու և այլն) իրենց շարքերը ներգրավելուց հետո էլ նոր ուղղվածություն չեն հաղորդում նրանց գործունեությանը:

Ընդհանրապես, հնչակյան գործիչներն ավելի շատ գաղափարախոսական աշխատանքներ են ծավալել, քան զինման և մարտական, ինչն էլ արդեն 1890-ական թթ. կեսերին շատ հայդուկների կողմնորոշեց դեպի Դաշնակցությունը, որի ձեռնարկած արևմտահայության զինման աշխատանքներն ավելի ակնառու էին:

Ա. Կիտուրը մանրամասնորեն ներկայացնում է Սասունի 1894 թ. ապստամբությունը: Այս առումով ուշագրավ է հետևյալ տեսակետը. «Սասունի ապստամբությունը ունեցավ բախտորոշ հետևանքներ: «Մայիսյան բարենորոգումները» անոր պտուղն են»[24]:

Ընդունենք մի պահ, որ Սասունի ապստամբությունը և դրան հետևած ջարդերը իրոք հիմք դարձան մեծ տերությունների միջամտության համար, և վերջիններս պարտադրեցին Թուրքիային ընդունել «Մայիսյան բարենորոգումները» (1895, մայիս): Սակայն հստակ է նաև մի բան. եթե այդ բարենորոգումներն իրականանային, ապա իսկապես կարելի էր խոսել բախտորոշ հետևանքների մասին: Բայց իրականում ապստամբությանը հետևեցին հայության առաջին զանգվածային ջարդերը, որոնք խլեցին 300 հազ. մարդու կյանք: Պատմական արդարությունը պահանջում է ընդգծել, որ, չըժխտելով գաղափարաքարոզչական ու սերունդների դաստիարակության առումով կարևոր նշանակությունը, այնուամենայնիվ, Սասունի 1894 թ. ապստամբության անմիջական հետևանքը 15 հազ. հայերի ջարդն էր, և սա անհերքելի ճշմարտություն է:

Սասունի 1894 թ. ապստամբությունը պարզապես այն թյուր համոզմունքի արդյունք էր, որ դրանով կարելի էր հասնել մեծ տերությունների իրական միջամտության և հօգուտ Հայկական խնդրի՝ Օսմանյան Թուրքիայի վրա ներազդելուն: Բայց XIX դ. վերջի և XX դ. սկզբի հայոց պամության զարգացման տրամաբանությունը ցույց է տալիս, որ ամեն անգամ, երբ մեծ տերությունները միջամտում էին, դրան հետևում էին հայոց ջարդերը:

Նույն մեծ տերությունների միջամտության հույսով էր պայմանավորված Բաբը Ալիի ցույցը (1895 թ.): Հետաքրքիր է այդ ցույցը ձեռնարկելու Ա. Կիտուրի պատճառաբանությունը. «Թուրք կառավարութիւնը մայիսյան ծրագրի վաւերացումը և անոր գործադրումը քննութեան պատրուակին տակ, դարձեալ կը ձգձգէր: Որքան կ՚ուշանար, հայութիւնը աւելի անհամբեր կը դառնար: Երբ այլեւս հրամանագրին գործադրութիւնը դարձաւ գրեթէ անյուսալի, Հնչակեան կուսակցութիւնը անհրաժեշտ նկատեց նոր և մեծ ցոյցով մը զայն յիշեցնել թէ՛ Սուլթանին և թէ՛ օտար պետութեանց»[25]: Ա. Կիտուրն այս ցույցի համար խիստ նպաստավոր էր համարում Իզ-

[24] *Նույն տեղում, էջ 135:*

[25] *Նույն տեղում, էջ 153:*

միրլյանի պատրիարք ընտրվելը: Կարծես թե վերջինս Թուրքիայի սուլթան էր ընտրվել, և նրա ձեռքին էր արևմտահայության ապագան:

Ակամա հարց է առաջանում. եթե Սասունի աղետալի դեպքերը չհանգեցրին մեծ տերությունների միջամտությանը, ապա ինչ արդյունքի կարող էր հանգեցնել նոր ցույցը: Բայց հնչակյանները, որոնք նմանատիպ ձեռնարկների համար հաճախ մեղադրում են դաշնակցականներին, այս դեպքում ևս առաջնորդվում են նույն մարտավարությամբ: Ցույցը կազմակերպվում է, բայց իրականում այն ի՞նչ է տալիս հայությանը: Խոսելով արդյունքների մասին՝ Ա. Կիտուրը գրում է. ա) «Հնչակեան կուսակցութեան կազմակերպած այս վիթխարի ցոյցը լայն արձագանք կը գտնէ միջազգային մամուլի ու քաղաքական աշխարհի մէջ: Եւրոպական մամուլը, հաղորդելէ ետք ցոյցին մանրամասնութիւնները, ընդարձակ խորհրդածութիւններ և մեկնաբանութիւններ կընէ»[26]. բ) «Սուլթան Համիտ հարկադրուած կ'ըլլար Պապը Ալիի ցոյցէն հազիւ քանի մը շաբաթ ետք և անոր հետեւանքով ստորագրել բարենորոգումներու ծրագիրը»[27]: Իսկապես, 1895 թ. հոկտեմբերին սուլթանը ստորագրում է բարենորոգումների հրամանը: Սակայն դեռ ստորագրության թանաքը չչորացած՝ «բարենորոգիչ» Շաքիր փաշան դրանք իրականացնում է՝ հայոց ջարդեր կազմակերպելով[28]:

Բավականին հետաքրքիր է Ա. Կիտուրի աշխատության զարգացման տրամաբանությունը: Ըստ նրա՝ յուրաքանչյուր հնչակյան գործողության հաջորդում է մյուսը, որովհետև Թուրքիան չի կատարում Եվրոպայի առաջարկած բարեփոխումները: Բաբը Ալիի՝ Ա. Կիտուրի արժևորած ցույցը դարձյալ հարկ եղած արդյունքը չի տալիս, որի պատճառով կազմակերպվում է Զեյթունի 1895 թ. ապստամբությունը: Այս առիթով նա գրում է. «Նենգամտութեան համաշխարհային ախոյեան՝ Ապտիւլ Համիտ՝ ոչ միայն կ'արհամարհէր, այլ կը թքնէր «Եվրոպական Արդարութիւն» կոչուած օրինագրքին վրայ: Ան կը մնար խուլ և համր որեւէ ձայնի հանդէպ, որուն մէջ լսուէր «հայուն» անունը: Իսկ Եվրոպան ամչնալու երես չունէր:

Պապը Ալիի ցույցին հետեւանքով կատարուած բոլոր առաջարկները մնացին անգործադրելի:

…Զեյթուն կ'եռար՝ իր ձայնը միացնելու համար Գում Գաբուի, Պապը Ալիի, Սասնո, Սեբաստիոյ, Մարզուանի և այլ ապստամբական ցոյցերուն ու շարժումներուն»[29]:

Այսպիսով, փաստորեն, Ա. Կիտուրն էլ ընդունում է, որ հնչակյանների նախորդ ձեռնարկները դրական ոչնչի չեն հանգեցնում ո՛չ սուլթանի քաղաքականության մեղմացման, ո՛չ էլ Եվրոպայի միջամտությանը հասնելու տեսանկյունից: Եվ ահա ծրագրվում է Զեյթունի ապստամբությունը:

---

[26] *Նույն տեղում, էջ 157:*

[27] *Նույն տեղում, էջ 160:*

[28] *Տե՛ս* **Ռուբէն,** *Հայ յեղափոխականի մը յիշատակները, Լօս Անճէլըս, 1952, էջ 123:*

[29] *Նույն տեղում, էջ 162:*

Հեղինակը միանգամայն իրավացի է, երբ գրում է.«Զէյթունի ապստամբութիւնը չէր նմաներ Փոքր Հայքի կամ միւս շրջաններու շարժումներուն», և «Զէյթունի ապստամբութիւնը պէտք է ըլլար զանգուածային: Բոլոր գիւղերը ոտքի պիտի ելնէին՝ զէնքն ի ձեռին՝ դուրս պիտի վոնտէին բռնակալներին, մինչեւ վերջնական յաղթանակ»[30]:

Զեյթունի ապստամբության հաղթական ավարտ ունենալու հանգամանքը երկու կարևոր պատճառով էր պայմանավորված. ա) ուներ համաժողովրդական բնույթ. բ) Զեյթունի բնակչությունը համեմատաբար լավ էր զինված, իսկ տեղի հայ անվանիներն ու համայնքի ղեկավարները (Նազարեթ Չաուշ և ուրիշներ) հնչակյաններ Մլեհի, Աղասու, Մարալի ու մյուսների հետ համախորհուրդ ու միասնական էին ոտքի ելել և պարզել ապստամբության ազատարար դրոշը:

Ա. Կիտուրի նկարագրությունից պարզ է դառնում, որ միայն ընդհանուր ապստամբությունն էր եվրոպական միջամտության հասնելու գրավականը: Դա ակներև էր հատկապես Զեյթունի օրինակով: 1896 թ. հունվարի 11-ին ռուսական, ֆրանսիական, ավստրիական, անգլիական, իտալական և գերմանական փոխհյուպատոսների միջամտությամբ թուրքերի հետ կնքվում է համաձայնագիր, որով, փաստորեն, վավերացվում է զեյթունցիների հաղթանակը: Համաձայնագրի կարևոր կետերից էին՝ Զեյթունի համար պետք է հաստատվեր քրիստոնյա կառավարիչ (Եվրոպայից), թուրքական բանակը պետք է պարպեր այն, ոստիկանները, հարկայինները և կառավարական պաշտոնյաները պետք է ընտրվեին զեյթունցիներից և այլն[31]:

Սակայն թեպետ Զեյթունը համեմատաբար զերծ է մնում ջարդերից, եվրոպական պետություններն այս անգամ էլ դրժում են իրենց խոստումը: Այդ մասին Ա. Կիտուրը գրում է. «Սակայն, եւրոպական պետութիւնները, քաղաքագիտական և շահադիտական նկատառումներով, դրժեցին իրենց խոստումը և երեսնիվար թողուցին թէ՛ համաձայնագիրը և թէ՛ իրենց յանձնառութիւնները»[32]:

Դրանով հանդերձ՝ մեծ տերությունների միջամտության հույսով ձեռնարկները դեռևս դուրս չեկան հնչակյանների օրակարգից:

Հեղինակի կողմից Վանում մինչև 1897 թ. հնչակյանների գործունեության ներկայացումը նույնպես այն համոզումն է ծնում, որ միասնականության մեջ էր հայ ազատամարտի հաղթանակի գրավականը: Դա հատկապես երևում է Վանի 1896 թ. հունիսյան ինքնապաշտպանական կռիվներին արմենական Մ. Ավետիսյան-Թերլեմեզյանի, հնչակյան Մարտիկի (Սարուխանյան) և դաշնակցական Պետոյի (Ալ. Պետրոսյան) գլխավորությամբ երեք կուսակցությունների համատեղ մասնակցության փաստից: Ճիշտ է, խմբերը Պարսկաստան նահանջի ճանապարհին եղերական վախճան են ունենում, սակայն ջարդերից փրկում են Վանի հայությանը:

[30] *Նույն տեղում, էջ 167:*
[31] *Նույն տեղում, էջ 190-192:*
[32] *Նույն տեղում, էջ 192:*

Ա. Կիտուրը ներկայացնում է նաև հնչակյան գործիչների գործունեությունը Սալմաստում (Փարամազ՝ Մաթևոս Սարգսյան) և Պարսկաստանի այլ գավառներում (Ռ. Մովսիսյան, Հակոբ Ղազարյան, Ալեքսան Տեր-Վարդանյան, Ասո (Տիգրան Օտյան) և այլն): Սակայն դեպքերի նկարագրությունից պարզ է դառնում, որ այդ գործունեությունն այնքան էլ արդյունավետ չէր: Դա, ի թիվս այլ պատճառների, կարելի է պայմանավորել նրանով, որ Պարսկաստանում ուժեղ էին դաշնակցականները: Հեղինակը թերագնահատում է Խանասորի արշավանքի նշանակությունը. նա այն կարծիքն է հայտնում, որ չի իրականանում խմբի նպատակը՝ ոչնչացնել մազրիկ ցեղը: Ավելին՝ արշավանքից հետո պարսկական իշխանություններն սկսում են հալածել հայ հեղափոխականներին[33]: Ակնհայտ է, որ Խանասորի արշավանքը զգալի դեր ունեցավ քարոզչական և հատկապես հետագա սերունդների դաստիարակության գործում[34]:

Առհասարակ, ինչպես դա հանդիպում է նաև արմենական հեղինակների մոտ, Ա. Կիտուրը հաճախ է քննադատում Դաշնակցությանը իր որդեգրած մարտավարության համար, և դա այն դեպքում, երբ գործնականում ինքն էլ գրեթե նույնով էր առաջնորդվում (խմբերով զենքերի ներմուծումներ, ցույցեր, ահաբեկչություններ, մասնակի կռիվներ): Իր աշխատության մեջ Ա. Կիտուրը փոքրածավալ գլխով ներկայացնում է Կովկասի հնչակյան կազմակերպության գործունեությունը մինչև 1897 թ.: Թիֆլիսի, Բաթումի, Բաքվի մասնաճյուղերը, ըստ նրա, հիմնադրել էր Խանազատը: Մյուս կարևոր դեմքերից էին Երվանդ Պալյանը (Բալախանի), Սաղաթել Գեվորգյանը և այլք: Հեղինակն այն կարծիքն է հայտնում, որ Կովկասում կուսակցության նպատակն էր խմբեր կազմել և առաքել Արևմտյան Հայաստան (Պարսկաստանով):

Անհրաժեշտ է շեշտել, որ Ա. Կիտուրի՝ հայության նկատմամբ ցարիզմի դիրքորոշումների գնահատականները տրամաբանված են և մեծ մասամբ ընդունելի: Հատկապես տրամաբանական է նրա հետևյալ հայեցակարգային մոտեցումը. «Ցարիզմը կարող չէր անկեղծօրէն համակրիլ «թրքահայ գաւառներու բարենորոգումներուն», որովհետեւ եթէ Թրքահայաստանը բարենորոգուէր, ռուսահայը ո՛չ միայն դժգոհ պիտի մնար իր վիճակէն, այլ ինքն ալ պիտի ուզէր բարենորոգուիլ, այն ալ ռուս յեղափոխականներուն օգնելով և կամ Թրքահայաստանին միանալով»[35]: Տրամաբանական է նաև նրա հետևյալ տեսակետը. «Որքան շատ ու շուտ ճզմուէր հայուն գլուխը Թուրքիոյ մէջ՝ այնքան շատ և շուտ հայեր կ'ապաստանէին Ռուսաստան և կը ձուլէին ռուս ամենակուլ մշակոյթի մէջ»[36]:

Հեղինակը թերևս ճիշտ է ըմբռնել նաև Անգլիայի քաղաքականության իմաստը: Վերջինս, ըստ նրա՝ «երբեք չէր կրնար քարտեսին վրայ տեսնել ազատ և անկախ Հայաստան մը, որ շատ դիւրու-

---

[33] *Նույն տեղում, էջ 210-211:*

[34] **Սարգսյան Ս.,** *1885-1908 թթ. հայ ազգային-ազատագրական պայքարը արմենական գործիչների գնահատմամբ, Ե., 2009:*

[35] *Նույն տեղում, էջ 254:*

[36] *Նույն տեղում, էջ 256:*

թեամբ, ճամբայ պիտի տար ռուսական հզօր բանակին, իջնելու Պարսից և Ալեքսանտրէթի տաք ջուրերը, թեւերը տարածելով մինչեւ Տարտանել, Պոլիս, պուլկարներու «Ցարիգրատ»-ը»[37]:

Մնում է միայն հարց տալ՝ եթե մեծ տերությունների քաղաքականության այս ըմբռնումը կար, այդ դեպքում հեղինակն ինչպես է դրվատանքով արտահայտվում այդ տերությունների հույսով կազմակերպված ձեռնարկներին:

Ա. Կիտուրը փորձում է անաչառ պատմաբանի դիրքերից քննել հնչակյանների պառակտման խնդիրը: Բայց դա չի նշանակում, թե նրա բոլոր եզրակացությունները ճիշտ են: Ակնհայտ ճշմարտություն է, որ այդ կուսակցությունը պառակտվեց սոցիալիզմի գաղափարախոսությունը որդեգրած լինելու պատճառով: Դա ըմբռնում է և Ա. Կիտուրը: Սակայն միևնույն ժամանակ կարծիք հայտնել, թե պառակտումը պայմանավորված էր նաև հայ դրամատերերի (հիմնականում Եգիպտոսում գտնվող Պողոս Նուբար, Ապրո, Յաղուբ, Արթին փաշաների) ունեցած դերով, տրամաբանական չէ: Ճշմարտությունն այն է, որ, իսկապես, հայ մեծահարուստներին խորթ էր սոցիալիզմը, բայց ճշմարիտ է նաև այն, որ թե՛ Հնչակյան կուսակցության ծրագրային փաստաթղթերում և թե՛ ողջ հայության (հարուստ թե աղքատ՝ կարևոր չէ) համար (հատկապես՝ արևմտահայության) գործունեության մեջ առաջնահերթությունը տրված էր Արևմտյան Հայաստանի ազատագրմանը: Իրավիճակ, որը հատուկ է ե-ղել բոլոր այն ժողովուրդներին, ովքեր ազգային-ազատագրության խնդիր են ունեցել: Ա. Կիտուրը հանդես է գալիս որպես Նազարբեկի, Մարոյի, Խանազատի և մյուս սոցիալիստների կողմնակից և հիմնականում մեղադրում է արևմտահայ հնչակյաններին, որոնք, ըստ նրա, արժանի պահվածք չդրսևորեցին հայ մեծահարուստների հանդեպ, բացասական դեր ունեցան և պառակտեցին կուսակցությունը: Բայց իրականում այդ մարդիկ (Ա. Արփիարյան, Մ. Տամատյան, Աղասի, Ապահ, Հրաչյա Մարալ և այլք) ոչ մի կապ չունեին դրամատերերի հետ և իրենց ամբողջովին նվիրել էին արևմտահայ դատին:

Աշխատության հաջորդ բաժնում Ա. Կիտուրը մանրամասն անդրադառնում է Լոնդոնի խորհրդաժողովին (1896 թ. սեպտեմբերի 28) և Վերակազմյալ հնչակյան կուսակցության ձևավորմանը: Այս խնդրի վերաբերյալ նրա հայտնած մանրամասներն այն տպավորությունն են թողնում, որ պառակտումից հետո այդ կուսակցությունն իրեն դժվարանում է վերագտնել: Ներքին տարաձայնությունները քայքայում են կուսակցությունը: Շատերը հեռացվում են, բայց դրրությունը չի բարելավվում: Ի վերջո, 1903 թ. սեպտեմբերին հրավիրված 4-րդ պատգամավորական ժողովն ընտրում է կենտրոնի նոր անդամներ, որոնց թվում էին Նազարբեկը և Խանազատը: Բայց դրությունը շտկել և հայ ազգային-ազատագրական պայքարում նախկին հզորության հասնել այդպես էլ չի հաջողվում: Եզրակացությունը մեկն է՝ Հնչակյան կուսակցությունը գրեթե կորցնում է

[37] *Նույն տեղում, էջ 255:*

իր դերը հայ ազատամարտում: Դրա վկայությունն է նաև այն, որ կուսակցության մյուս թևը՝ վերակազմյալները, նույնպես պառակտվում են, թուլանում ու դադարում որևէ լուրջ դեր ունենալ և շուտով միախառնվելով այլ քաղաքական ուժերի՝ ստեղծում են Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը:

Հետաքրքիր է նաև Իթթիհատի և Հնչակյան կուսակցության հարաբերություններին նվիրված բաժինը: Համագործակցության առաջարկները, Ա. Կիտուրի ասելով, իթթիհատականներից գալիս են Գում Գափուի ցույցից հետո, հատկապես Ահմեդ Ռիզայի միջոցով: Երկար բանակցությունների ընթացքում հնչակյաններն առաջ են քաշում ինքնավար Հայաստանի հարցը, որը, բնականաբար, իթթիհատականները մերժում են, ինչով էլ այդ բանակցություններն ավարտվում են[38]:

Անդրադառնալով 1907 թ. դեկտեմբերին Փարիզում կայացած «Օսմանյան կայսրության ընդդիմադիր տարրերի կոնգրեսին», որը նախաձեռնել էր Դաշնակցությունը, Ա. Կիտուրը կարծում է, որ վերջինս զոհ գնաց Իթթիհատի քաղաքական նուրբ սադրանքներին[39]: Եվ, բնականաբար, մեղադրում է Դաշնակցությանը երիտթուրքերի հետ դաշինքի մեջ մտնելու համար: Անկախ այն հանգամանքից, թե ինչով վերջացավ այդ դաշինքը, ընդգծենք, որ այն ժամանակի և ստեղծված իրադրության թելադրված պահանջ էր, որը, սակայն, դեպքերի զարգացման հետևանքով քննություն չբռնեց: Եթե ընդունենք, որ «ինքնավար Հայաստանի» հնչակյան պահանջն ավելի ճիշտ էր, ապա միևնույն է՝ այն ևս այդ իրավիճակում երբեք չէր իրականանա: Ելքը մնում էր կամ Թուրքիայի բարեփոխման համար պայքարելը, որն ընտրեց Դաշնակցությունը, կամ էլ ընդհանրապես չհարաբերվելը, ինչը խիստ կսրեր հայ-թուրքական առանց այն էլ ոչ այնքան բարեկամական հարաբերությունները:

Կարծում ենք, որ սրանք են այն հիմնական տեսակետներն ու հայեցակարգերը, որոնք ունի Ա. Կիտուրը 1885-1908 թթ. հայ ազգային-ազատագրական պայքարի վերաբերյալ: Աշխատության մեջ, ինչպես հատուկ է կուսակցական պատմագրությանը, գերագնահատված են հնչակյան շատ գործողություններ, քննադատված են մասնավորապես Դաշնակցության նմանօրինակ գործողությունները, և, դժբախտաբար, անաչառորեն ի մի չեն բերված Հնչակյան կուսակցության գործունեության ընդհանուր արդյունքները, որոնք բխում էին համայն հայության շահերից:

Ավելացնենք, որ Ա. Կիտուրի գործը շահեկան է նաև որպես սկզբնաղբյուր, քանզի պարունակում է կուսակցական բազմաթիվ ժողովների արձանագրություններ, որոշումներ և այլ վավերագրեր ու փաստաթղթեր, որոնք լույս են սփռում հնչակյանների պատմության շատ հարցականների վրա:

---

[38] *Նույն տեղում, էջ 313-314:*

[39] *Նույն տեղում, էջ 314:*

XIX դ. վերջի և XX դ. սկզբի հայ ազգային-ազատագրական պայքարում Հնչակյան կուսակցության գործիչների դերի բացահայտմանն է նվիրված նաև Ա. Կիտուրի մի այլ աշխատություն ևս[40]: Սակայն դրա վերլուծությունը նպատակահարմար չենք համարում, քանզի այն կրում է նկարագրական բնույթ, և եթե հանդիպում էլ են ինչ-ինչ հայեցակարգային մոտեցումներ, ապա դրանք ամբողջովին մեր քննարկած գրքի բովանդակության կրկնություններն են: Աշխատությունն ընդգրկում է Փոքր Հայքի և Կիլիկիայի հնչակյան հերոսների, հայդուկային խմբերի (Ժիրայրի, Չելլոների և Դանիել վարդապետի) հերոսական պայքարի պատմությունը:

НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНАЯ БОРЬБА АРМЯНСКОГО НАРОДА 1885-1908 ГГ. В ОЦЕНКЕ АРСЕНА КИТУРА

САРГСЯН С. Т.

Резюме

Освободительной борьбе армянского народа 1885-1908 гг. посвящено множество мемуаров и исследований, являющих собой характеристику и анализ исторических реалий этого периода. В числе этих исследований следует выделить работу Арсена Китура, известного представителя партии Гнчакян. Излагая историю своей партии, А. Китур не смог дать объективного анализа деятельности гнчакистов, проявив субъективизм в переоценке роли своей партии и осудив партию Дашнакцутюн за действия, послужившие для турецких властей поводом в инициировании антиармянских акций.

[40] *Տե՛ս* **Կիտուր Ա.,** *Հայ ազատագրության ճանապարհին, Պէյրութ, 1949:*